

ԼՈՐՆԵ ՇԻՐԻՆՅԱՆ. ՍԸՐ ՎԻԼՅԱՄ ՎՈԹՍՈՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ, 1896-1897*

Կազմեց՝ ՀԱՍՍԻԿ ԱՔՐԱՀԱՍՅԱՆԸ

19-րդ դարի Արևմտյան Հայաստանի դեպքերը բողոքի ալիք են բարձրացնում ողջ աշխարհում ոչ միայն սուլթան Համիդի և նրա կառավարության, այլև եվրոպական մի շարք կառավարությունների դեմ: Իսկ որոշ բանաստեղծների ու գրողների համար հայկական խնդիրը դառնում է իրենց ստեղծագործությունների գլխավոր թեման: Սույն հոդվածը վերաբերում է, մասնավորապես, անգլիացի բանաստեղծ Մլր Վիլյամ Վոթսոնի ստեղծագործություններին, որոնցում առանձնակի տեղ են գրավում Հայոց ցեղասպանությունն արձագանքող մի շարք սոցետները: Իր ստեղծագործություններին միջոցով Վոթսոնն արտահայտում է մահ իր վերաբերմունքը սեփական կառավարության նկատմամբ: Մական նրա գրվածքների մասին ավելի ճշգրիտ կարծիք կազմելու համար հարկ է ներկայացնել հայերի և քրիտանացիների փոխհարաբերությունները նշված ժամանակաշրջանում:

1894-1896 թվերի հայկական կոտորածները, որոնք այդքան խորը հետք են թողել անգլիացի բանաստեղծ Մլր Վիլյամ Վոթսոնի ստեղծագործությունների վրա, կարելի է վերագրել ռուս-քրիտանական հարաբերությունների հետևանքին: Նշենք, որ այդ հարաբերությունները 19-րդ դարում բավական թշնամական էին: Ինչպես հայտնի է՝ 1877-1878 թվերի ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսները թուրքերին հարկադրում են ստորագրել Սան Ստեֆանոյի պայմանագիրը՝ իր հայտնի թիվ 15 հոդվածով, որն իրավունք էր վերապահում ռուսներին վերահսկել Արևելյան Անատոլիան (պատմական Հայաստան)՝ մինչև սուլթանը քրիստոնյա ազգաբնակչությանը պաշտպանելու նպատակով չանցկացներ վերափոխումներ: Նշենք մահ, որ վերափոխումների այդ ծրագիրը վերաբերում էր, հատկապես, հայերին: Եվրոպական մյուս պետությունները, վախճնալով ռուսական էքսպանսիայից, պահանջում են անցկացնել Բեռլինում կոնգրես՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու նպատակով: Բեռլինի պայմանագիրը ներառում էր թիվ 61 հոդվածը, որտեղ ոչ մի ակնարկ չէր արվում հայերի մասին: Այն պահանջում էր ռու-

ԳՐԱՆՈՍՈՒ-
ԹՅՈՒՆ,
ՄԱՏԵՆԱԳԻ-
ՏՈՒԹՅՈՒՆ,
ՌԵՃԵՐԱՏԱ-
ՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏ-
ՎՈՒԹՅՈՒՆ



* Lorne Shirinian. Sir William Watson and the Armenians, 1896-1897; Journal of the Society for Armenian Studies, 1994, volume 7, University of Michigan, pp. 71-91.

տական բաժնակի դուրս բերումն Արևելյան Ամատուխայից, վերափոխումների ծրագրի անցկացումը թողնելով սուլթանի և եվրոպական տերությունների հայեցողությանը: Միաժամանակ՝ թուրքերն ու քրիստոնեացիները զաղտնի համաձայնագիր են կնքում, որը հայտնի է «Կիպրոսի կոնվենցիա» անվանումով: Այդ համաձայնագրով Բրիտանիայի հսկողությանն է հանձնվում Թուրքիայի արևելյան սահմանի պահպանումը, միաժամանակ Բրիտանիային հանձնելով Կիպրոսը, ինչպես նաև պատմական Հայաստանում վերափոխումներ անցկացնելու սուլթանի խոստումի կատարման հսկողությունը:

Այսպիսով, «օսոցուտ հայերի» վերափոխումների անցկացումը հանձնվում է քրիստոնեացիների պատասխանատվությանը, փաստորեն, դրա հետ կապված, 1894-1896 թվերի հայկական կոտորածների քարոշական պատասխանատվությունն ընկնում է նաև քրիստոնեացիների վրա:

1879 թվին Լոնդոնում լույս է տեսնում մի ուսումնասիրություն՝ «Մեր նոր պրոտեկտորատը» վերնագրով, որը վերաբերում էր հայկական խնդրին: Բրիտանական կառավարությունը ոչ մի օգուտ չէր տեսնում Հայաստանը ո՛չ որպես զաղութ և ո՛չ էլ՝ պրոտեկտորատ ունենալու պարագայում: Բրիտանիան, միաժամանակ, չէր ցանկանում դիմել այնպիսի քայլերի, որոնք եվրոպական մյուս տերություններին կտրամադրեին իր դեմ: Այդքանով իսկ՝ նա լուրջ հիմքեր չէր տեսնում օգնելու հայերին: Մյուս կողմից՝ եվրոպական տերությունների տնտեսական շահերը թույլ չէին տալիս ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Փաստորեն, արևելյան սահմանների պահպանումը Բրիտանիայի հսկողությանը հանձնելը հայերին զրկում էր ռուսական հովանավորությունից: Հետագայում անգլիական պրեմիեր մինիստր Դեյվիդ Լլոյդ Ջորջը այս կապակցությամբ նշում է. «Եթե չլիներ մեր կործանարար միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը 1878 թվականի Ման Ստեֆանոյի պայմանագրի համաձայն կգտնվեր ռուսների հովանավորության տակ... Բրիտանական կառավարության գործունեությունն անխուսափելիորեն տարավ 1895-1897, 1909 և 1915 թվականների սարսափելի կոտորածներին»:

Բրիտանիայի՝ օսմանյան կայսրությունում իր տնտեսական կապերն ընդլայնելու ցանկությունը ստեղծեց մի այնպիսի իրավիճակ, երբ քրիստոնեական կառավարությանը չէր կարող հակադրվել սուլթանին՝ պարտադրելով անցկացնել խոստացված վերափոխումները: 1880 թվականին քրիստոնեական լիբերալ կառավարությունը, որը փոխարինել էր պահպանողականների կառավարությանը, բարեպաշտ հայտարարություններ էր անում, սակայն գործնականում ոչինչ չէր ձեռնարկում՝ բարելավելու հայերի վիճակը: Արդյունքում՝ սուլթան Համիդը իրեն ավելի ապահով զգաց, քան՝ երբևէ: Բրիտանական լիբերալ կառավարության կողմից հայկական խնդրին միջամտելը, փաստորեն, էլ ավելի վատթարացրեց հայերի դրությունը:

1894 թվականին Մասուդի պաշարման ժամանակ հազարավոր հայեր ամենաամառդկային ձևով ոչնչացան: Իհարկե, այդ ամենի մասին քաջատեղյակ էին Եվրոպայում: Ըուտով Եվրոպայում լիբերալ շարժման ներկայացուցիչները փորձեր են անում իրենց կառավարություններին պարտադրել Բեռլինի պայմանագրի թիվ 61 հոդվածի կենսագործումը: Սակայն այդ նույն ժամանակաշրջանում Բրիտանիայի կողմից՝ սուլթանին այդ հոդվածն իրականացնելու յուրաքանչյուր պարտադրանք կոխտվեց

որպես գերիշխամություն այդ տարածաշրջանում՝ եվրոպական մյուս տերությունների նկատմամբ: Հետևանքը եղավ այն, որ տարածաշրջանում եվրոպական տերությունների կողմից գերիշխամության հասնելու մրցակցության հետևանքով վերափոխումների անցկացումը մտավ փակուղի:

1894-1896 թվականների կողրածների ժամանակ մոտավորապես 300000 հայ ոչնչացան: Չնայած այդ թիվը մոտավոր է, սակայն այն խոսում է որբերգության անհավոր չափերի մասին: Եթե այդ թվին ավելացնենք նաև բոցի ուժով հավատափոխ եղած հազարավոր հայերին, ինչպես նաև քաղաքիվ ամռանը վաճառված կանանց ու երեխաներին, ապա պատկերն ավելի քան պարզ կլինի: Մյուս կողմից՝ մոտ 2500 շեն գյուղեր ամայացան կամ հողին հավատարմեցին: Բազմաթիվ եկեղեցիներ ենթարկվեցին ավազակային հարձակումների ու կողոպուտների, իսկ շատ-շատերը՝ պարզապես վերածվեցին մզկիթների ու ախոռների: Այդ ամենին հաջորդեցին սովն ու համաճարակները: Այդ ժամանակաշրջանում մոտ 10000 հայ հեռացավ Անդրկովկաս: Նշենք, որ եվրոպական շատ տերություններին հայերի ճակատագիրը հետաքրքրում էր միայն քաղաքական ու տնտեսական շահերի տեսանկյունից: Սակայն այն, ինչ տեղի էր ունեցել կամ տեղի էր ունենում հայերի հետ միայն հայկական խնդիր չէր, քանզի ոտնահարվում էր մարդկային արժանապատվությունը:

Որպեսզի ավելի պատկերավոր լինի այն ժամանակաշրջանը, երբ ապրում ու ստեղծագործում էր Սղո Վիլյամ Վոթսոնը, հարկ է ներկայացնել նաև վիկտորյան ժամանակաշրջանի հասարակայնության նկարագիրը:

Վիկտորյան հասարակայնության շրջանակներում կարևոր նշանակություն և դեր ունեին կրոնն ու իր համապատասխան հաստատությունները: Անգլիայում, քացի անգլիական եկեղեցուց, կային նաև աղանդավորականներ կամ նոնկոնֆորմիստներ, ինչպիսիք էին՝ քվակերները, քապտիստները և մեթոդիստները: Աղանդավորները կամ նոնկոնֆորմիստները, որոնք քարոյականության խիստ քաղաքաշտ համակարգի կողմնակից էին, սովորաբար դիտվում են որպես ավետարանական շարժման կողմնակիցներ: Ջոն Վեալիի (1703-1791)՝ ավետարանական քարոյագիտության գլխավոր պատասխանատուներից, շարժման և մեթոդիզմի կարևոր դեմքերից մեկի ազդեցությունը նկատելի էր հասարակության բոլոր խավերի շրջանակներում: Այդ ազդեցության հետևանքով Վիլյամ Վիլքերֆորսը դատապարտում է տվյալ ժամանակաշրջանին բնորոշ ստրկավաճառությունը, իսկ Լորդ Շաֆթսբերին՝ կանանց ու երեխաների շահագործումը ֆաբրիկաներում և հանքերում:

Վիկտորյան ժամանակաշրջանին բնորոշ մեկ այլ կողմերից էր ուտիլիտարիզմը, որն, ըստ Ջերեմի Բենթամի մեկնաբանության, քաղաքական և առօրյա փիլիսոփայություն էր, ուր կարևոր տեղ էր հատկացվում սեփական շահին ու հետաքրքրություններին: Ուտիլիտարիզմի վառ օրինակ կարող է հանդիսանալ Չարլզ Դիկկենսի «Ծանր ժամանակներ»-ի Գրադգրինդի կերպարը: Ըստ այս փիլիսոփայության՝ մարդկային խիղճը, կարեկցանքը, վեհանճությունը և այլ հատկանիշներ կարևոր չեն, գլխավոր գործոնը՝ սեփական շահերի պահպանումն է: Սղո Վիլյամ Վոթսոնն իր ստեղծագործություններում, անդրադառնալով հայկական խնդրին, ընդհակառակը, մեծ ուշադրություն է դարձնում մարդկային բարձրագույն հատկանիշներին:

Փատոդեն, Անգլիայում՝ վիկտորյան ժամանակաշրջանում միմյանց հակադրվում էին մի կողմից ավետարանական շարժումը, որը քարոզում էր քարոյագիտության խիստ քարեպաշտ համակարգը, և մյուս կողմից՝ ուտիլիտարիզմի չոր պետությունությունը: Այս ամենի հետևանքով մշված ժամանակաշրջանում Անգլիայում ձևավորվում են միմյանց հակադիր հասարակական խավեր: Ասենք նաև, որ Վոթսոնի «Միդանագոյն արևելք» ժողովածուի լույսընծայման ժամանակ այդ երկու փիլիսոփայությունների ամմիջական ազդեցությունը միմյանց էր: Այսուհանդերձ՝ եթե գտնվում էր մեկը, որ կոչ էր անում պաշտպանել անօթևան մարդկանց և Բրիտանիային պատասխանատվության կանչել այդ կապակցությամբ, այդպիսիները, սովորաբար, «ջերմ ընդունելության» չէին արժանանում: Այս առումով առավել է արժեքավորվում Վոթսոնի ստեղծագործությունը:

Իսկ ինչպիսի՞ն էր վիկտորյան հասարակությունում պոեզիայի և պոետի դերն ու նշանակությունն առհասարակ: Նախքան Վիկտորիա քաղաքում գահ բարձրացվելը (1837) պոեզիան արդեն քարկոծվում էր: Շատերի համար այս ժանրը դարձել էր հնաժող. այն դիտվում էր ավելի շուտ որպես զվարճանքի մի յուրահատուկ ձև: Մաթյու Առնոլդն այդ ժամանակաշրջանը բնորոշում է որպես «խորապես ոչ քանաստեղծական»: Ամշուշտ, մախորդ ժամանակաշրջաններում պոեզիայի նշանակությունն ավելի մեծ էր, և նրա նկատմամբ վերավերմունքն էլ՝ ավելի լուրջ: Ըստ Առնոլդի՝ «պոեզիան կյանքի ուղեցույցն է և մշակույթի կարևոր քաղկացուցիչ մասը», իսկ ուշ վիկտորյան ժամանակաշրջանը (1870-1901) ինքնաբավարարման մի յուրահատուկ ժամանակաշրջան էր, երբ հարուստ ու իշխող խավը առանձնակի ուշադրություն էր դարձնում իրավիճակներին ու հանգստին: Չնայած բնության քանաստեղծականությունը և, ընդհանրապես, պոեզիան ընդունելի էր լոկ որպես զվարճանքի մի ձև, ոմանց կարծիքով ժամանակակից հասարակությանը կարելի էր վերադարձնել իր արժեքները՝ հենց արվեստի միջոցով: Այսպիսով, վիկտորյան հասարակությունում մի շարք տարրերի մեջ, պոեզիան ևս մնում էր պարագայում: Տվյալ ժամանակաշրջանում քանաստեղծը, փաստորեն, կամ պիտի ներփակվեր իր ներաշխարհում՝ ստեղծելու համար իր արվեստը, կամ էլ՝ պիտի դեմառդեմ հակադրվեր հասարակությանը և ժամանակակից աշխարհին: Մըր Վիլյամ Վոթսոնն ընտրում է առաջինը:

Բրիտանացիների այն սերնդի ներկայացուցիչների համար, որոնք հանդիսանում էին հայկական խնդրի պաշտպանը, քարոյականության և մարդկային բարձրարժեք սկզբունքները մեծ կարևորություն էին նեկայացնում: Գլադսթոնն իր վերջին ճառում վեց հազարանոց հասարակության առջև հանդես գալով հոգուտ հայկական խնդրի, նշեց, որ նրանք, ովքեր պաշտպանում էին հայոց խնդիրը, ներկայացնում էին ոչ թե միայն բրիտանական կամ եվրոպական, այլև՝ համամարդկային քարոյական բարձրագույն հատկանիշներ: Գլադսթոնի բնորոշմամբ՝ բրիտանական կառավարությունը մահանցել էր իր պարտականություններից: Հասարակական մեկ այլ նշանավոր դեմք՝ Արչի Դուքսն իր «Արևելյան խնդիրը» գրքում, անդրադառնալով հայկական խնդրին, այն կարծիքին էր, որ Բրիտանիայի կողմից հայկական խնդրից հեռանալու հիմքում ընկած էին եասիքական և շահադիտական մաշատակները՝ բրիտանական կառավարությանը որակելով որպես «անհեռատես և անբարոյական»: Ի հակադրություն բրիտանական կառավարության որդեգրված քաղաքականության՝

հայկական խնդրի կապակցությամբ 19-րդ դարի վերջերին Լոնդոնում և Մանչեստերում սկսեցին ձևավորվել հատուկ հայամալսատ կոմիտեներ: Դրանց ստեղծմանը նպաստում էր Ջեյմս Բրայսը, որը հայտնի է իր «Անդրկովկասն ու Արարատը» աշխատությամբ (1896): Տիկին Ֆրեդերիկ Բավենդիշը, որը ամուսնական կապերով Գլադսթոնի ազգականուհին էր, Բրիտանիայում հայկական շարժման մեկ այլ նշանավոր դեմքերից էր: Տիկին Քավենդիշն իր պրեմիեր մինիստրին ու արտաքին գործոց նախարարներին չէր հոգնում անդադար հիշեցնել՝ հայ ժողովրդի ճակատագրի կապակցությամբ նրանց պարտականությունների մասին:

1896 թվականին Բրիտանիայում ստեղծվում է մեկ այլ՝ «Հայաստանի քարեկանները 1896-ին» միությունը:

Ասենք, որ Բրիտանիայում և, ընդհանրապես, ամբողջ աշխարհում հայամալսատ շարժման հետևանքով ստեղծված խմբավորումների, կոմիտեների ու միությունների մեջ իր ուրույն տեղն ունեն 1890-ին ստեղծված «Անգլո-հայկական ասոցիացիան», որի նպատակն էր քիվ 61 հոդվածի իրագործումը: Իսկ, ընդհանրապես, վերոհիշյալ կոմիտեների ու միությունների նպատակը՝ հայկական խնդրի վրա հասարակայնության ուշադրության հրավիրելը և համապատասխան հիմնադրամներ ստեղծելն էր: Նշենք, որ բոլոր այս խմբավորումների աշխատանքները մեծավ մասամբ ղեկավարվում էին լիբերալ և պահպանողական կուսակցությունների անդամների կողմից: Քիչ ջանք չէին թափում մահ քարեզործական նպատակով Հայաստան այցելած ճանապարհորդները: Այսպես՝ Լինչը Հայաստանից վերադառնալուց պես գրեց «Հայաստան. ճանապարհորդություններ և ուսումնասիրություններ» երկհատորանոց գիրքը: Թոթակիցներից Դիլլոնը («Դեյլի թելեգրաֆ») պարբերաբար հաղորդումներ էր տալիս հայերի իրական վիճակի մասին:

Արևմտյան Եվրոպայում՝ գրականության, քաղաքականության, կրոնի քննադատներում քիչ չէին այն անձինք, որոնց նպատակն էր՝ պաշտպանել հայերին թուրք ժանդարմներից: Այդ անձանց մեջ առանձնապես էր անգլիացի բանաստեղծ Սրբ Վիլյամ Վոթսոնը (1858-1935): Նա հպարտանում էր իր՝ հայկական խնդրի ջերմ պաշտպաններից մեկը հանդիսանալու փաստով: Հայկական խնդրի վերաբերյալ նրա ամենաառաջին գրվածքներից մեկում Վոթսոնը մերկացնում էր Արդուլ Համիդի հայատյաց և անմարդկային քաղաքականությունը:

Հարկ է ավելի մանրամասն անդրադառնալ Սրբ Վիլյամ Վոթսոնի «Ծիրանագույն արևելք» և «Նալառառականության տարի» ժողովածուների՝ ի պատասխան Թուրքիայում հայկական կոտորածների գրված սոցետներին, որոնք հանդիսանում են անգլիական գրականության հիասքանչ մտուշներ:

Վոթսոնը, որը լիվերպուլցի վաճառականի որդի էր, արագորեն ճանաչվում և ընդունվում է որպես բանաստեղծ: 1917 թվականին նրան շնորհվում է ասպետի կոչում: Վոթսոնը մոտ 32 գրքերի հեղինակ է: Նրա ստեղծագործությունների մեջ առանձնանում են «Ծիրանագույն արևելք» և «Նալառառականության տարի» ժողովածուները, որոնք ամբողջովին նվիրված են հայկական խնդրին: Այդ ժողովածուները բազմաթիվ հրատարակություններ են ունեցել: Նշված ժողովածուներից առաջինի սոցետները, որոնց մասին խոսք կգնա ստորև, վերցված են Լոնդոնում, 1896 թվականի հրատարակությունից: Հետագայում այն վերահրատարակվել է մահ ԱՄՆ-

ում: Երկրորդ ժողովածուի սոցետները վերցված են 1897-ին Ջոն Լեյնի կողմից՝ Լոնդոնում, հրատարակությունից: Վերջինս ևս հետագայում վերահրատարակվել է ԱՄՆ-ում:

Խոսելով Վոթսոնի քանաստեղծական ոճի մասին, նշենք, որ նա ընտրել է 14 տողից բաղկացած սոցետի ոճը: Հետևելով իտալացիներին, Վոթսոնը սոցետի հիմնական բովանդակությունն արտահայտում է առաջին 8 տողերի միջոցով: Իսկ հաջորդ 6 տողերն առաջին 8 տողերի մասին միայն ակնարկ են կամ էլ խնդրի լուծումն են հանդիսանում: Այսպես՝ քանաստեղծն իր «Հեղինակության գինը» սոցետի առաջին 8 տողերում նկարագրում է Անգլիան՝ որպես իմպերիալիստական տերություն: Սոցետի ընտրած այս ոճը հմարավորություն է տալիս ոչ միայն քննադատելու, այլև՝ առաջարկելու համապատասխան լուծում: Անդրադառնալով օսմանյան կայսրությունում հայերի ճակատագրին Վոթսոնը սուր քննադատության է ենթարկում անգլիացիներին, որոնց որդիները մոռացել են, թե ինչ բան է ճշմարտությունն ու պատիվը: Վոթսոնի սոցետների համառոտ և ճշգրիտ ոճը հմարավորություն է տալիս գերծ մնալ ավելորդաբանություններից, ինչպես նաև կոնկրետամալ տվյալ խնդրի շուրջ: Նրա ստեղծագործություններում բացառվում են նաև անհարկի լիրիկական զեղումները: Հետաքրքրական է այն փաստը, որ Վիլյամ Վոթսոնի սոցետները կարծես մեկը մյուսի շարունակությունը լինեն. առկա է նրանց միջև զադափարական կապը: Վերոհիշյալ երկու ժողովածուների միջանցով թեման հայ ժողովրդի ճակատագրի և Անգլիայի՝ հայկական խնդիրն անտեսելու թեման է:

«Ծիրանագույն արևելք»-ի երրորդ հրատարակության մեջ կան մի շարք սոցետներ, որոնք բացակայում են նրա նախորդ՝ երկրորդ հրատարակության մեջ: Իդեալ՝ երրորդ հրատարակության ներածության մեջ նշված են 28 պետական գործիչների անուններ՝ Լորդ Ֆիզմորիս, Ջ. Բրայս, Մլր Ջորջ Միթլեյ, Արջիլի Դուքս և այլք: Մյուսն անուններ են, որ անմիջականորեն առնչվում են հայ օգնության ֆոնդին: Այդ հրատարակության մեջ զետեղված է նաև անգլիացի քանաստեղծի «Քաղցող Հայաստան» քանաստեղծությունը, որն առաջին անգամ լույս է տեսել 1896 թվականի փետրվարի 6-ին՝ «Նյու Յորք Թայմզ»-ում: Բանաստեղծության մեջ, Անատոլիայում հայերի վիճակը ներկայացնելուց հետո, Վոթսոնը նշում է, որ «... կգա հատուցման պահն այն անգլիացիների համար, որոնք շրջեցին իրենց հայացքներն այս ժողովրդից: Մեռածները դեռ կխոսեն»: Ժողովածուի ներածական բաժնում զետեղված են ևս երկու մոր քանաստեղծություններ, որոնք խոսում են Բրիտանիայի պատասխանատվության մասին՝ 1878 թվականի անգլո-թուրքական կոնվենտի թիվ 1 հոդվածի կապակցությամբ: Նշված ժողովածուի ներածությունում տեղ են գտել Արջիլի Դուքսի՝ ասիական թուրքիայում մոտ 100000 հայերի սովի մատնված լինելու փաստի մասին հավաստիացումները: Ըստ դրանց՝ «... հազարավոր հայեր թափառում են անտառներում՝ քաղցած ու զրեթ մերկ»: Գրքում ներկայացված է նաև Դուքսի՝ հայերին օգնելու կոչը, որը մինչ այդ արդեն տպագրվել էր «Թայմզ»-ում: Ըստ Արջիլի Դուքսի հավաստման՝ մոտ 8000 ֆունտ էր հավաքվել Սասունի հայերին օգնելու համար, որ պիտի քաշվել տարածաշրջանում գործող ամերիկյան եկեղեցական միսիոներների միջոցով: «Նախորդ երկու ամիսների ընթացքում Անատոլիայում հայկական սարսափելի կոտորածներն առաջ են քերել տագնապ և ծաղախեղ զրկանքներ հայ վերապորոհների շրջանում, որոնց հաջողվել է կենդանի մնալ՝ փախչե-

լով այն վայրերը, որտեղ բնակվում են քրիստոնեական հյուպատոսարանի պաշտոնյաները», - նշում է Դուքսը: Ներածական բաժնի այս հատվածն ավարտվում է միացյալ քաղաքագործությունում հայերին օգնելու նպատակով համապատասխան ֆոնդեր ստեղծելու կոչով: Գրքի ներածական բաժինը եզրափակում է հայ օգնության ֆոնդի պրեզիդենտի հաղորդագրությունը՝ ֆոնդի ընդլայնման համար կատարված ստույգ քայլերի մասին: Այդ կապակցությամբ պրեզիդենտը նշում է. «Ֆոնդի բաշխման նպատակով արդեն ստեղծվել են կոմիտեներ՝ քրիստոնեական հյուպատոսարանի պաշտոնյաների վերահսկողությամբ, Էրզրումում, Տրապիզոնում, Վանում, Բիթլիսում, Խարփուքում, Սվասում, Դիարբեքիրում, Արաքլիքում, Մարտվանում, Այնթափում, Մարաշում և այլուր: Կոմիտեներին վստահված բոլոր այս ֆոնդերը կբաշխվեն ոչ միայն քաղաքներում, այլև՝ գյուղական վայրերում: Նշված գումարը հայերին կօգնի գոյատևել մնչև հաջորդ ապրիլ»:

Վոքսոնի «Ծիրանագույն արևելք» ժողովածուի երկրորդ և երրորդ հրատարակությունների միջև ընկած կարճատև ժամանակաշրջանի ընթացքում (մեկ տարում) հայերին օգնելու ջանքերը կրկնապատկվեցին: Նկատենք, որ Վոքսոնի այս գիրքը ոչ թե բողոքի մի հուսահատ ճիչ էր, այլ, փաստորեն, բանաստեղծն իր այս գրքով ևս իր մասակցությունն էր բերում հայանպաստ շարժմանը: Նա այն եզակի բանաստեղծներից էր, որ չընտրեց պատասխանատվությունից խուսափելու ճանապարհը:

Վիլյամ Վոքսոնն իր գրքի ներածության մեջ նշում է, որ իր սոցետների միջոցով նա «խաչում է իր սուրը» Անգլիայի դափնեկիր բանաստեղծի՝ Ռոբերտ Բրիջի հետ (այստեղ տեղին է նկատել, որ 1913 թվականին, երբ առաջարկվել էր Վոքսոնի թեկնածությունը՝ որպես դափնեկիր բանաստեղծ, նույն թվականին այն շնորհվում է Ռոբերտ Բրիջին): Վոքսոնը սուր քննադատության է ենթարկում դափնեկիր բանաստեղծին, որն իր պաշտոնական դիրքորոշման թելադրանքով՝ անտեսել է Բրիտանիայի հայերի հանդեպ քարոյական պարտականությունների պարագան: Իրոք՝ Վոքսոնի «The Bard-in-Waiting» և «Leisured Justice» սոցետները, փաստորեն, դափնեկիր բանաստեղծի «հայրենասիրական գեղումներին» ընդդիմախոսող մի յուրօրինակ պատասխան էր: Բանաստեղծն իր այս սոցետներում անգլիացիներին կոչ էր անում ուշքի գալ և կատարել հայերի հանդեպ իրենց քարոյական պարտականությունները:

Վոքսոնը գրեթե ամհույս էր, որ բանաստեղծությունների միջոցով հանուն արդարության իր պայքարը կտա ցանկալի արդյունք: Նա հասկանում էր, որ ողբն ու արցունքը շատ քիչ են ռդերգական սխալներն ուղղելու համար: Մյուս կողմից՝ Վոքսոնը համարում էր, որ բանաստեղծությունը պայքարի ամենակարևոր միջոցներից մեկն է: Իր սոցետներում նա համիդյան կառավարության՝ հայերի համար ստեղծած պայմանները «դժոխսային» էր համարում և հորդորում սեփական կառավարությանը խնդրի ճիշտ և շուտափույթ լուծում գտնել՝ վկայակոչելով հարյուրհազարավոր հայ անմեղ մահատակներին: Վոքսոնն այն կարծիքին էր, որ եթե Անգլիան, ելնելով սեփական եասնիրական շահերից խնդրի կարգավորման համար ոչինչ չի անում, ապա, զոհն, չափտի խոչընդոտի նրանց, ովքեր ցանկանում են և կարող են օգնել հայերին: Նա գուցաեռներ է անցկացնում հայկական խնդրի նկատմամբ անգլիացիների անտարբերությանն և թուրքերի դաժանության միջև: Իր այդ սոցետների ժողովածուի հրատարակությամբ Վոքսոնն ակնկալում էր, որ տեղեկամալով հայերի ողբերական ճակատագրի

մասին, անգլիացիները կոնկրետ քաղաքական միջոցներ կձեռնարկեն իրականացնելու հայերի հանդեպ ունեցած իրենց քաղաքական պարտականությունները: «The Turks in Armenia» («Թուրքերը Հայաստանում») սոցետում Վոթսոնը հարց է տալիս՝ ի՞նչ օգուտ կա գերիշխանություններից, երբ անկարող ես լսել մորթվող հազարավոր անմեղ կանանց ու երեխաների ճիչը: Եվ պատասխանում է իր իսկ հարցին՝ իշխանությունն ու հարստությունը զրոյի են հավասարվում, եթե դրանք չեն գործադրվում քաղաքական նպատակներով: Նա քրիստոնեացիներին կոչ է անում անհապաղ օգնել հայերին, քանզի մեր երկնային հայրն է այդպես կամենում. քավական է անպատասխան ճիչը, գործել է պետք:

Իր մեկ այլ՝ «Craven England» («Վախկոտ Անգլիա») սոցետում անգլիացի բանաստեղծը սուր քննադատության է ենթարկում քրիստոնեացիներին՝ քննողչելով նրանց որպես վախկոտներ և դավաճաններ, որոնք վաղուց մոռացել են, թե ինչ բան է պատիվն ու ճշմարտությունը: «The Price of Prestige» («Հեղինակության գինը») սոցետում Վոթսոնն անգլիացիներին պարսավում է այն փաստի կապակցությամբ, որ նրանք կարող էին հրամայել ռազմական նավատորմիդին պաշտպանել հայերին, սակայն, ելնելով շահադիտական նպատակներից, այդ բանը չարեցին:

Իր «Repudiated Responsibility» («Ուրացված պարտավորություն») սոցետն անգլիացի բանաստեղծը գրել է Բրիտանիայի ֆինանսների մախարարի ճառից հետո: Այստեղ մա քրիստոնեացիներին համեմատում է Կայենի հետ, որն ուրանում և սպանում է եղբորը: Անգլիացիները ոչ մի կոնկրետ միջոց չձեռնարկելով, փաստորեն, մույնքան հանցավոր են, որքան և թուրքերը: Բանաստեղծը հարց է տալիս, արդյոք ե՞րբ կգա այն ժամանակը, երբ օգնության ձեռք կմեկնեն հայերին: Լավ գիտակցելով, որ Անգլիան քուբրովին մտադիր չէ իրագործելու իր ունեցած պարտավորությունները հայերի հանդեպ, բանաստեղծը դիմում է ամերիկացիներին՝ հայերին օգնելու հորդորով, քանի որ իր սեփական ժողովուրդը հրաժարվում է այդ անել («England to America» - «Անգլիան՝ Ամերիկային»): «The Tired Lion» («Հոգնած առյուծ») սոցետում Անգլիան ներկայացվում է որպես հոգնած, անկարող և անտարբեր մի առյուծ (առյուծը, ինչպես հայտնի է, Անգլիայի խորհրդանիշն է) և կրկին՝ հայկական կոտորածների համար մա մույնքան մեղավոր է համարում անգլիացիներին, որքան և թուրքերին:

«Leisured Justice» («Ամտեղի արդարություն») սոցետում մա կծու հեզմանքով է խոսում այն մասին, որ հազարավոր անմեղ հայ մանուկների և կանանց մորթվելուց հետո միայն Անգլիան կրարձրացնի իր «բողոքի ձայնը» հանուն «արդարության»:

Սոցետների այս շարքում իր առանձնակի տեղն ունի «Wondrous Likeness» («Չարմանալի նմանություն») սոցետը: Բանաստեղծը ցավով է խոսում այն մասին, թե ինչպես են ամայացել գյուղերն ու քաղաքները: Նա զարմանալի նմանություն է տեսնում հայկական և անգլիական երկու փոքրիկ քաղաքների միջև, որոնց փողոցներում և տներում այլևս ոչ մի մարդ չկա:

Հրատարակությունը եզրափակում է «Վերջին խոսք» («Last Word») սոցետը, որտեղ բանաստեղծն, այնուամենայնիվ, հույս է փայփայում, որ, ի վերջո, անգլիացի ժողովուրդն օգնության ձեռք կմեկնի հայ ժողովրդին. օգնության համար երբեք էլ ուշ չէ:

Բանաստեղծությունների հաջորդ ժողովածուն («Ամոքի տարի» («The Year of Shame») հրատարակված 1897-ին) ներառում է 1886 թվակա-

նին լույս տեսած «Ծիրանագույն արևելք»-ի երրորդ հրատարակության գրքի 16 ստեղծագործություններ, սակայն՝ քիչ փոփոխված հաջորդականությամբ ու որոշ շտկումներով: Այս գիրքը ներառում է մահ 11 նոր քանդակարվեստներ, որոնցից ոչ բոլորն են ստեղծագործություններ: Գրքի մախարանում քանդակարվեստը նշում է, որ, չնայած ժամանակագրական որոշ հաջորդականության, քանդակարվեստները հիմնականում մեկը մյուսի շարունակությունը չեն: Այստեղանդերձ՝ այս երկրորդ գրքի քանդակարվեստներից շատերը մախարդ գրքի ստեղծագործության քննարկի շարունակությունն են: Վոթսոնը կրկին ու կրկին փորձում է արթնացնել անգլիացիների խիղճը և կոչ է անում ձեռնամուխ լինել իրենց մարդկային պարտականությունների կատարմանը հայ ժողովրդի հանդեպ: Անգլիացի քանդակարվեստը հակադրում է անգլիացիների քարեկեցիկ կյանքը հայ ժողովրդի դաժան ճակատագրին: Նա հոգու անքարայնականություն է համարում այն փաստը, թե ինչպես անգլիացիները, նստած իրենց հարմարավետ ու տաքուկ բնակարաններում, զվարճանում են, մինչդեռ հազարավոր հայ մանուկներ քաղցած են ու բոկոտն: Իր «Տիկնոջը» («To a Lady») քանդակարվեստում Վոթսոնը կոչ է անում սգալ արևելյան հնագույն ժողովրդի դաժան ճակատագիրը: Մեկ այլ քանդակարվեստում մեջ Վոթսոնը հեզմանքով «ներողություն է» խնդրում Արդու Համիդից՝ նրան «անիծյալ» անվանելով: «Ռուսաստանին» («To Russia») սեղծագործությունում քանդակարվեստը գովերգում է ռուս ժողովրդին՝ որպես հայերի ազատարարի: «Քաղցող Հայաստան» («Starving Armenia») քանդակարվեստում Վոթսոնը կրկին կոչ է անում քարեկեցիկ ապրող մարդկանց՝ բացել սրտերը և լսել հայերի ճիչը:

Ամփոփենք, չնայած մոտ մեկ դար է անցել Վոթսոնի այս երկու ժողովածուների վերջին հրատարակումից, նրա ստեղծագործությունները շարունակում են մնալ քարձրարժեք: Վոթսոնի այս երկու գրքերն ապացույց են այն քանի, որ թեև 19-րդ դարի վերջերին Անգլիան քերացավ հայ ժողովրդի նկատմամբ իր քարոյական պարտականությունների կատարման մեջ, այնուամենայնիվ, կային առանձին անհատներ, որոնք պայքարում էին հանուն արդարության: Հենց այս առումով Վոթսոնի ստեղծագործություններն առավել արժեք են ձեռք բերում: